

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2018թ. հունիսի 21-ի ընդլայնված նիստի (արձ. N13)

1. Դեկանների զեկույցներն ընդունել է ի գիտություն և հանձնարարել շարունակել քննարկումների գործընթացը ուսանողների հետ համատեղ,

1.1 հանձնարարել ֆակուլտետների դեկաններին ուս. պլանների վերանայման վերաբերյալ ուսանողների կողմից ներկայացված առաջարկները, դժգոհությունները քննարկել համապատասխան ամբիոններում և մշակված նախագծի տեսքով ներկայացնել ռեկտորատի քննարկմանը՝ նախնական քննարկումներին պարտադիր մասնակից դարձնելով ուսանողությանը,

1.2 հանձնարարել ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Վ. Եղիազարյանին ուսումնասիրել լսարանների վերաբաշխման և ծագած խնդիրների կարգավորման հարցը և ռեկտորատի առաջիկա նիստում քննարկման ներկայացնել ինստիտուտի տարածքային վերաբաշխումների վերաբերյալ նախագիծ:

2. Հանձնարարել իրավախորհրդատու Է. Մանասերյանին և պրոռեկտոր Հ. Ավագյանին՝

2.1 համատեղ մշակել «Հանդես» գիտամեթոդական հոդվածների ժողովածուում հոդվածների տպագրության և ֆինանսական հարցերի սահմանման կարգի նախագիծ,

2.2 մշակել ԵԹԿՊԻ-ի աշխատակազմի խրախուսման և պարգևատրման կարգի նախագիծ,

2.3 հանձնարարել դեկաններին՝ պրոֆեսորադասախոսական կազմի վարձատրությունը դրույքաչափի ձևաչափով սահմանելու առաջարկը քննարկել բոլոր ամբիոններում:

3. Վավերացնել ՀՀ ժողովրդական արտիստ Արմեն Սանթրոսյանին, ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, ինստիտուտի կողմից պատվո մեդալով պարգևատրելու փաստը,

3.1 երկարամյա վաստակաշատ մանկավարժական աշխատանքի և հայ մշակույթի զարգացման բնագավառում ունեցած ծառայությունների համար ԿՀ ամբիոնի խորհրդատու Հակոբ Իսկուդարյանին պարգևատրել ինստիտուտի պատվո մեդալով:

3.2 Հիմք ընդունելով Ռեժիսուրա մասնագիտության 2018թ. շրջանավարտ Քրիստինե Արայիկի Նազարյանի անվանափոխության վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը՝ բակալավրի կրթական աստիճանի դիպլոմը հատկացնել անվանափոխված տարբերակով՝ Կրիստինա Արայիկի Նազարյան:

3.3 Ի լրումն ԵԹԿՊԻ-ի 2018թ. հունիսի 4-ի նիստի N 4 որոշման, բավարարել Ռեժիսորական IV կուրսի շրջանավարտ Էդգար Մեհրաբյանի դիմումը և որպես փոխհատուցում հատկացնել 220.000 (երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

3.4 հանձնարարել Ուսխորհրդին ուսանողների շրջանում հարցում կատարել և գրադարանի ֆոնդը համալրելու համար ներկայացնել անհրաժեշտ գրականության ցանկ,

3.5 կազմել հանձնախումբ ուսումնասիրելու թատրոնի և կինոյի վերաբերյալ գրադարանում առկա գրքերի ցանկը և ներկայացնել այն նոր ցանկով լրացնելու առաջարկ,

3.6 հանձնարարել ՖՏԱԳ պրոռեկտոր Վ. Եղիազարյանին զբաղվել ուսանողների կողմից ներկայացված ցուցակում ներառված տնտեսական մասի խնդիրների կարգավորման հարցով, ռեկտորատի հաջորդ նիստում ներկայացնել եզրակացության նախագիծ:

Գիտքարտուղար

Գ.Հովհաննիսյան